

Հարգելի գործընկերներ,

Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը Հայաստանի ռոբոտների Բաց առաջնության շրջանակներում «Ական փնտրող ռոբոտ» և «Ռոբոտների համակարգչային սիմուլյացիա» մրցույթների եզրափակիչ փուլերը նախատեսում է անցկացնել 2010թ.-ի մայիսի 8-ին և 9-ին Շուշի քաղաքում: Մրցույթների եզրափակիչ փուլերը տեղափոխվել են 2010թ.` հաշվի առնելով մրցույթների մասնակիցների շրջանակը ընդլայնելու, մասնավորապես սփյուռքահայ թիմերի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունը: Վերը նշված մրցույթները նվիրված են Շուշիի ազատագրման և Հայրենական պատերազմի տարելիցներին: Մրցույթներին արդեն իսկ գրանցվել է 20 թիմ:

Հաշվի առնելով վերոհիշյալը` ԻՏՁՄ-ն 2009թ.-ի դեկտեմբերի 21-ից մինչև 2010թ.-ի հունվարի 31-ը հայտարարում է մրցույթներին գրանցվելու լրացուցիչ ժամկետ: Նախկինում գրանցված թիմերի գրանցումը մնում է ուժի մեջ: Մրցույթներին գրանցվելու համար անհրաժեշտ է հայտ լրացնել <http://digitec.am/armrobotics.php?id=> կայք էջում կամ նամակ ուղարկել armrobotics@uite.org հասցեին հայտի ձևը ստանալու համար:

Մասնակիցները կարող են օգտվել «Հուրներ» ընկերության կողմից անվճար տրամադրած մասերից:

Նկարագրություն

Ական փնտրող ռոբոտ մրցույթ

Այս մրցույթի ընթացքում մասնակիցները պետք է նախագծեն և պատրաստեն ռոբոտներ, որոնք կգտնեն ականապատված դաշտում հողի տակ պահված ականները և սերվերին ուղարկեն վերջիններիս դասավորությամբ քարտեզը: Ականները կունենան ձայնային ազդանշան, որով պարզ կդառնա ռոբոտը պայթել է, թե ոչ: Ռոբոտը պետք է ունենա սահմանափակ քաշ և չափեր /չափերը 30×30սմ, քաշը 10 կգ/: Հաղթող կճանաչվի այն թիմը, որն իր առջև դրված խնդիրը կլուծի նվազագույն ժամանակում, նվազագույն սխալներով:

Համակարգչային սիմուլյացիա մրցույթ

Համակարգչային սիմուլյացիան իրենից ներկայացնում է վիրտուալ ռոբոտների մրցույթ: Մասնակիցները պետք է ծրագրավորեն վիրտուալ ռոբոտների թիմ, որը պետք է խաղա վիրտուալ ֆուտբոլ: Ռոբոտների ծրագիրը կարող է գրված լինել ծրագրավորման ցանկացած լեզվով՝ Լինուքս օպերացիոն համակարգում: Հաղթող կճանաչվի այն թիմը, ում գրած ծրագիրը կլինի ավելի ճիշտ և ռոբոտների թիմը կհաղթի հակառակորդ թիմին: